2.7. Նվազելիի, հանելիի, տարբերության, քանորդի որոշումը (մի քանի քայլով)

Երեխայի հետ զբաղվողին

1. Երեխաները 78 սունկ հավաքեցին: 18-ը եփեցին, իսկ մնացածը՝ 15-ական բանկաները լցրեցին: Քանի՞ բանկա օգտագործվեց:

Պատկերացրու՝ մենք ենք այդ երեխաները: Ընդամենը 78 սունկ էր, որից 18-ը եփեցինք, ուրեմն 60-ը մնաց (78 - 18 = 60): Այդ մնացած 60-ը բանկաներն ենք լցնում՝ պահելու: Ամեն բանկայի մեջ 15 սունկ ենք լցնում: 15 առաջինի մեջ, 15՝ երկրորդի մեջ...: Պատկերացրու՝ 15, 15 ... ենք դրել: Քանի՞ բանկայի սունկ կա, այսինքն՝ քանի՞ 15 սունկ կա: Այլ կերպ՝ 60-ի մեջ քանի՞ 15 կա: 4, որովհետև 60 : 15 = **4**:

2. Մանկապարտեզ 4 պարկ ալյուր բերեցին, ամեն պարկում՝ 15 կգ: 49 կգ-ով խմորեղեն թխեցին: Ինչքա՞ն ալյուր մնաց:

Դու ու ես մանկապարտեզում ենք աշխատում: 4 պարկ ալյուր ենք ստացել, և ամեն պարկում 15 կգ է: Ուրեմն քանի՞ կգ ալյուր ենք ստացել: 4 հատ 15 կգ-ը 60 կգ է (4 x 15 = 60): Այդ 60 կգ-ից 49-ը ծախսեցինք՝ ալյուրը 49 կգ-ով պակասեց և **11 կգ դարձավ** (60 – 49 = 11):

Արի մեզ ստուգենք: Եթե 49 կգ ալյուր ծախսել ենք ու 11 կգ մնացել է, ուրեմն սկզբում ունեցել ենք և՛ այդ 49 կգ-ը, և՛ 11կգ-ը, այսինքն՝ 49 + 11 = 60 (կգ): Մենք այդ ալյուրը հավասարապես լցված 4 պարկերով ենք ստացել: 60 կգ-ը 4 հավասար մասերով էինք ստացել, ուրեմն ամեն մեկը 60 : 4 = 15 (կգ) էր՝ ամեն պարկը 15 կգ էր կշռում: Խնդրում հենց այդպես էր, ուրեմն մենք խնդիրը ճիշտ ենք լուծել:

Արի խնդիր լուծենք

1. 3 շարքում 9-ական մարդ է նստած, իսկ մնացած շարքերում՝ 8-ական մարդ: 5 շարքում քանի՞ մարդ է նստած:

Լուծիր ու պատասխանով վեպ ստուգիր:

Պատասխանը՝ 43 դրոնտ:

Ազատ նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստա՛տ կլուծես:)

1. Երեք դասարաններից յուրաքանչյուրից 6 մարդ մրցումների գնաց: Նրանցից 5-ը մրցանակ ստացան: Քանի՞ մարդ մրցանակ չստացավ:

2. Երբ մեր խոհարարը կարտոֆիլի պարկից 4 անգամ 3-ական կգ օգտագործեց, այնտեղ 2 կգ կարտոֆիլ մնաց: Պարկում ինչքա՞ն կարտոֆիլ կար:

3. Երբ 7 ուղևոր կանգառում իջավ, ավտոբուսում նրանցից 3 անգամ ավելի ուղևոր մնաց: Սկզբում ավտոբուսում քանի՞ ուղևոր կար:

4. Երբ 8 վազորդ մրցումներից դուրս մնաց, նրանցից 3 անգամ ավելի մարդ շարունակում էր մրցել: Սկզբում մրցումներին քանի՞ վազորդ էր մասնակցում:

5. Երբ տակառից 6-լիտրանոց դույլով երեք անգամ ջուր հանեցին, այնտեղ 12 լ մնաց: Տակառում ինչքա՞ն ջուր կար:

6. Երեխաներն իրենց ստացած վարունգի բերքը 5 զամբյուղի մեջ լցրին, ամեն զամբյուղի մեջ՝ 6 կգ: 28 կգ զամբյուղներում չտեղավորվեց: Քանի՞ կիլոգրամ վարունգ կար:

7. Երեխաներին տետրեր բաժանելուց հետո մայրիկի մոտ 2 տետր մնաց, սկզբում եղածից 3 անգամ քիչ: Երեխաներին քանի՞ տետր բաժանեց:

8. Դպրոցի բուֆետն 9 արկղ թխվածք ստացավ: Երկու օր հետո բուֆետում 8 կգ թխվածք մնաց: Երկու օրում քանի՞ կիլոգրամ թխվածք վաճառեցին, եթե ամեն արկղում 2 կգ թխվածք կար:

9. Արսենի թափած մատիտները մայրիկիս հետ 5 տուփի մեջ դասավորեցինք, ամեն տուփի մեջ՝ 12 մատիտ: 8 մատիտ տուփերի մեջ չտեղավորվեց: Արսենը քանի՞ մատիտ էր թափել:

10. Սպորտային խանութում 60 գնդակ կար: Դրանց մի մասը 5 ցանցի մեջ լցրին, ամեն ցանցի մեջ՝ 7 գնդակ: Ցանցից դուրս քանի՞ գնդակ մնաց:

11. Շինարարներն ավազանից չորս 30 լ-անոց տակառով ջուր վերցրին, որից հետո ավազանում 15 լ ջուր մնաց: Ավազանում սկզբում քանի՞ լիտր ջուր կար:

12. Դրոշմանիշներիս հավաքածուն 3 ալբոմի մեջ դասավորելուց հետո 24-ը դուրս մնացին (չկարողացա տեղավորել): Հավաքածուիս մեջ քանի՞ դրոշմանիշ կար, եթե ամեն ալբոմում 70 դրոշմանիշ էր տեղավորվել:

13. Ընկերներիս հետ կենդանաբանական այգում զբոսնելիս 240 դրամ ծախսեցի, և ինձ մոտ դրանից 3 անգամ ավելի փող մնաց: Ինձ հետ ինչքա՞ն փող էի կենդանաբանական այգի տարել:

14. 17 մ ռեզինե խողովակից 4 միանման կտոր կտրեցին ու էլի 5 մ մնաց: Ամեն կտորը քանի՞ մետր էր:

2.8. Մեծությունների համեմատումը (մի քանի քայլով)

Երեխայի հետ զբաղվողին

1. Մի բնակարանում 9 բնակիչ կար, իսկ մյուսում՝ 6-ով պակաս: Երկրորդ բնակարանի բնակիչները քանի՞ անգամ էին քիչ:

Երկու բնակարաններից մեկում 9 մարդ է ապրում, մյուսում՝ նրանից, այսինքն 9-ից՝ 6-ով պակաս: Ուրեմն երկրորդ բնակարանում 3 մարդ է ապրում (9 – 6 = 3): Նշանակում է, մենք պիտի պարզենք, թե 3-ը 9-ից քանի՞ անգամ է քիչ կամ՝ 9-ը 3-ից քանի՞ անգամ է շատ: Կամ՝ 9-ի մեջ քանի՞ 3 կա: Ուրեմն՝ **3 անգամ** (9 : 3 = 3):

2. Խաղալիք արջուկը 200 դրամ արժե, իսկ խաղալիք զինվորը՝ 2 անգամ պակաս: Արջուկը զինվորից ինչքանո՞վ է թանկ:

Խաղալիք զինվորն արջուկից 2 անգամ քիչ արժե՝ էժան է, նշանակում է, որ արջուկին տված փողով՝ 200 դրամով կարող ենք 2 զինվորիկ գնել: Այսինքն 2 հատ զինվորը 200 դրամ են: 2 հատ քանի՞ դրամն է 200 դրամ: Ճիշտ է՝ **100 դրամը**:

Ստուգե՞նք: 2 հատ 100 դրամը (2 x 100դր. = 200դր.):

Արի խնդիր լուծենք

1. Բաճկոնը 120 դոլար արժե, իսկ զգեստը՝ 3 անգամ պակաս: Բաճկոնն զգեստից ինչքանո՞վ է թանկ:

Լուծիր ու պատասխանով վեց ստուգիր:

Պատասխան՝ 80 դոլար:

2. Անին 18 տարեկան է, իսկ Աստղիկը նրանից 3 անգամ փոքր է: Աստղիկն Անիից քանի՞ տարով է փոքր:

Լուծիր ու պատասխանով վեց ստուգիր:

Պատասխան՝ 15 տարեկան:

Ազատ նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստա՛տ կլուծես:)

1. Նարինեն 3 խաղալիք է պատրաստել: Դա Արմենի պատրաստածից 2 անգամ քիչ է: Ո՞վ է ավելի շատ խաղալիք պատրաստել և որքանո՞վ:

2. Առաջին դասարանում 6 պահարան կա, իսկ երկրորդում՝ 3-ով պակաս: Առաջին դասարանում քանի՞ անգամ շատ պահարան կա:

3. Առաջին խաղակեսին ֆուտբոլիստները 5 գոլ խփեցին, իսկ երկրորդ խաղակեսին՝ 5 անգամ քիչ: Երկրորդ խաղակեսին քանիսո՞վ պակաս գոլ խփեցին:

4. 5 արկղ սալորը 45 կգ է կշռում, իսկ 6 արկղ խաղողը՝ 18 կգ: Մի արկղ խաղողն է ծա՞նր, թե՞ մի արկղ սալորը: Քանի՞ անգամ:

5. 6 տուփ մատիտը 48 գ է կշռում, իսկ 4 տուփ ռետինը՝ 16 գ: Մի տուփ մատիտը մի տուփ ռետինից քանի՞ անգամ է ծանր:

6. Ընկերներս ու ես 3 շարք խնձորենի տնկեցինք, ամեն շարքում՝ 5 ծառ: Եղբայրս ու իր ընկերները 8 խնձորենի տնկեցին: Մենք քանի՞ խնձորենի ավելի տնկեցինք:

7. Եղբայրս 20 տարեկան է, իսկ քույրս նրանից 15 տարով փոքր է: Քույրս եղբորիցս քանի՞ անգամ է փոքր:

8. Հողամասից 55 ծմերուկ հավաքեցինք, իսկ սեխ՝ 44-ով պակաս: Ձմերուկը քանի՞ անգամ ավելի էր:

9. Այգում 5 շարք կեռասենի կա (ամեն շարքում 8 ծառ) և 4 շարք խնձորենի (ամեն շարքում 5 ծառ): Խնձորենիները կեռասենիներից քանի՞ անգամ են քիչ:

10. 4 տուփ մատիտ ունեմ (ամեն տուփում 20 մատիտ) և 4 տուփ նշագրիչ (ամեն տուփում 10 նշագրիչ): Մատիտներս նշագրիչներիցս քանի՞ անգամ են շատ: Իսկ քանիսո՞վ են շատ:

11. Մեր դասարանը դպրոցի այգում 14 ծառ է տնկել: Դա ընկերոջս դասարանի տնկածից 2 անգամ քիչ է: Ո՞ր դասարանն է ավելի շատ ծառ տնկել և որքանո՞վ:

12. Բազիլիո կատուն, միամիտների խաբելով, 18 ոսկի էր գողացել, որն Ալիսա աղվեսի գողացածից 3 անգամ շատ էր: Ո՞վ էր ավելի շատ գողացել և ինչքանո՞վ:

13. Ճնճղուկներն ու աղավնիները Մոխրոտին օգնում էին ոսպը ցորենից առանձնացնելու: Աղավնիները 24 կգ մաքրեցին, ճնճղուկների մաքրածից 3 անգամ շատ: Որո՞նք ավելի շատ մաքրեցին և ինչքանո՞վ:

14. Գրադարանում 3 պահարանի մեջ հայերեն գրքեր են (ամեն պահարանում՝ 80 գիրք) և 4 դարակ ռուսերեն գրքեր (ամեն դարակում՝ 20 գիրք): Հայերեն գրքերը ռուսերեն գրքերից քանի՞ անգամ են շատ:

2.9. Երկու արտադրյալների գումարի որոշումը

Երեխայի հետ զբաղվողին

1. **Այգում 5 շարք կեռասենի կա (ամեն շարքում՝ 8 ծառ) և 4 շարք խնձորենի (ամեն շարքում՝ 5 ծառ): Այգում քանի՞ ծառ կա:**

Այգում շարքերով կեռասենիներ և խնձորենիներ են տնկված (չգիտենք, թե որի՛ց ինչ-քա՛ն): Կեռասենիների ամեն շարքում 8 ծառ կա, ուրեմն 5 այդպիսի շարքում կլինի 5 անգամ շատ՝ 5 x 8 = 40 (ծառ):

Խնձորենիները 4 շարքով են տնկված, ամեն շարքում՝ 5 ծառ: Ամեն շարքում 5 ծառ է, ուրեմն 4 շարքում՝ 4 այդքան, այսինքն՝ 4 անգամ ավելի՝ 4 x 5 = 20 (ծառ):

Այգում խնձորենիները 20-ն են, իսկ կեռասենիները՝ 40-ը, ուրեմն այգում ընդամենը 20 + 40 = **60 ծառ** կա:

Հուշում

Եթե երեխան այսպիսի բացատրությունը չհասկանա, կարող եք իրադրությունը պայմանականորեն նկարել:

Արի խնդիր լուծենք

1.



Նկարին նայելով հաշվիր՝ քաղցրավենիքը քանի՛ կիլոգրամ է:

Պատ. 42 կիլոգրամ:

2. Աննան 3 գրիչ ու 6 տետր գնեց: Մի գրիչը 40 դրամ արժեր, իսկ մի տետրը՝ 30 դրամ: Աննան քանի՞ դրամ վճարեց:

Լուծիր ու պատասխանով ֆեյ ստուգիր:

Պատ՝ 300 դրամ:

Ազատ նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստա՛տ կլուծես:)

1. Ընկերներս ու ես 3 շարք խնձորենի տնկեցինք (ամեն շարքում՝ 5 ծառ), իսկ եղբայրս ու իր ընկերները՝ 2 շարք (ամեն շարքում՝ 8 խնձորենի) տնկեցին: Բոլորս միասին քանի՞ ծառ տնկեցինք:

2. Դպրոցով 3 ավտոբուսով և 4 մարդատար մեքենաներով էքսկուրսիա գնացինք: Ամեն ավտոբուսի մեջ 15 մարդ էր նստել, իսկ ամեն մեքենայի մեջ՝ 5 մարդ: Քանի՞ մարդ էր էքսկուրսիա գնացել:

3. Մեր այգու խնձորի բերքը 3 արկղի մեջ հավասար (ամեն արկղում՝ 14 կգ) լցրինք, իսկ մնացածը՝ 5 տոպրակի մեջ (ամեն մեկում՝ 4 կգ): Ընդամենը քանի՞ կիլոգրամ խնձոր էինք հավաքել:

4. Երբ մատիտներս 7 տուփի մեջ հավաքեցի (ամեն տուփում՝ 20-ը), մնացածը 2 փոքր տոպրակի մեջ (ամեն մեկում՝ 12-ը) տեղավորվեց: Քանի՞ մատիտ ունեի:

5. Գանձանակիս 10-դրամանոցները 4 տուփի մեջ տեղավորվեցին (ամեն մեկում՝ 10 հատ), իսկ 20-դրամանոցները՝ 1 տուփի մեջ (20 հատ): Կարո՞ղ ես հաշվել՝ գանձանակիս մեջ ինչքա՛ն փող էր հավաքվել:

6. Վինի-Թուխը նոր մեղրը 15 բանկայի մեջ տեղավորեց (ամեն մեկում՝ 4 կգ), իսկ մնացածը՝ 2 բանկայով (ամեն մեկում՝ 3

կգ) Դնչիկին տվեց: Վինի-Թուխը քանի՞ կիլոգրամ նոր մեղր էր ստացել:

7. Ձմռան համար մթերված կարտոֆիլը 10 արկղի մեջ հավասար (ամեն արկղում՝ 15 կգ) լցրինք, իսկ մնացածը՝ 2 պարկի մեջ (ամեն պարկում՝ 12 կգ): Ընդամենը քանի՞ կիլոգրամ կարտոֆիլ էինք մթերել:

8. Մանկատան երեխաների համար մեր հավաքած գրքերը 7 արկղի մեջ դասավորելուց հետո (ամեն արկղում՝ 30 գիրք) մնացած գրքերը 2 տոպրակի մեջ դրեցինք (ամեն մեկում՝ 6 գիրք): Քանի՞ գիրք էինք հավաքել:

9. Պապիկիս 80-ամյակին մենք երկու միկրոավտոբուսով և 3 մարդատար մեքենաներով քաղաքից դուրս գնացինք: Ամեն միկրոավտոբուսում 12 մարդ կար նստած, իսկ ամեն մեքենայի մեջ՝ 5 մարդ: Եթե կարո՞ղ ես, հաշվիր՝ քանի՛ հոգով նշեցինք պապիկիս 80-ամյակը:

10. Քաջ Նազարն իր սպանած ճանճերը գեղեցիկ տուփերի մեջ դասավորեց՝ մարդկանց մոտ գլուխը գովելու համար: 25 մեծ տուփի մեջ մեծ ճանճերը դրեց (ամեն մեկում՝ 20 ճանճ), իսկ 20 փոքր տուփի մեջ՝ փոքրերը (ամեն մեկում՝ 25 հատ): Քաջ Նազարը քանի՞ ճանճ էր սպանել:

11. Գրադարանի համար գնած գրքերը կապոցներով դպրոց տարանք: Գրքերի 11 կապոցներից ամեն մեկում 13 գիրք էր, իսկ մնացած 5 կապոցներից ամեն մեկում՝ 10: Դպրոց քանի՞ գիրք տարանք:

12. 3 ավտոբուսով և 6 մարդատար մեքենայով զբոսաշրջիկներ Մատենադարան եկան: Ամեն ավտոբուսի մեջ 25 մարդ էր նստել, իսկ ամեն մեքենայի մեջ՝ 5 մարդ: Քանի՞ մարդ էր Մատենադարան էքսկուրսիա եկել:

13. Տարբեր երկրների փողերի հավաքածուս 10 դարակի մեջ դասավորեցի (յուրաքանչյուրում՝ 35 հատ), իսկ ավելացած 13-ը՝ փոքր լաթե տոպրակի մեջ: Հավաքածուիս մեջ քանի՞ փող կա:

14. Գրախանութից մեր գնածը կապոցներով դպրոց տարանք: Գրքերի 15 կապոցներից ամեն մեկում 30 գիրք էր, իսկ տետրերի 5 կապոցներից ամեն մեկում՝ 100 տետր: Քանի՞ գիրք և տետր էինք գնել:

15. Այսօր 5 կգ վարունգ և 4 հաց գնեցի: Մի կգ վարունգը 400 դրամ արժեր, իսկ մի հացը՝ 120 դրամ: Ինչքա՞ն փող ծախսեցի: